Տեղակայում (պրեֆեկտուրա)	Արտադրանք	Սկիզբ առնելու շրջան	Հիմնական սկզբնական պայմաններ	Արտադրական ձեռնարկության հիմնական բնութագրիչներ
Ֆուկուի(Fukui)	Սինթետիկ կտորեղեն	վաղ 1900-ականներ	Ճապոնիայում այլ կլաստերներից տեխնոլոգիական փոխանցումները (Kiryuu) Պրեֆեկտուրայի կառավարման մարմինները խթանեցին արդյունաբերությունը՝ 1910-30-ական թթ. տեխնոլոգիական կենտրոնների գործարկման միջոցով	Բազմակողմանի ենթապայմանագրերի կնքում Մեծ փորձվածությամբ և ընդունակություններով ֆիրմաների համատեղ գոյություն
Նիշիվակի (Nisiwaki) /Hyogo/	Բամբակյա կտորեղեն	1973	Պատմական կլաստեր (բամբակյա կտորեղեն) Տեխնոլոգիայի փոխանցում Ճապոնիայի այլ կլաստերներից	Բազմակողմանի ենթապայմանագրերի կնքում Մեծ փորձվածությամբ և ընդունակություններով ֆիրմաների համատեղ գոյություն

Որպես եզրակացություն, ներկայումս ազգային և տարածքային կառավարման մարմինների ուշադրությունը կենտրոնացած է տեղեկատվությունների և բարձր ու գիտահենք տեխնոլոգիաների զարգացման օժանդակմանը: Հաջորդ կարևոր ոլորտը ցանցերի և համագործակցության մշակույթի զարգացումն է: Դրանք նպաստում են հենքերի ստեղծմանը, որը խթանում է կլաստերային ֆիրմաների, կրթական և հետազոտական կենտրոնների, ֆինանսական ինստիտուտների և կառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների միջև փոխանակումը: Այդպիսի հենքերն ավելի ու ավելի են ղեկավարվում արհեստավարժների կողմից (օրինակ՝ գործադիր գործակալություններ, փորձագետներ և այլն): Նրանք իրենց վրա են վերցնում գործունեության տարբեր տեսակների համակարգումը՝ ինչպես օրինակ ուսումնասիրությունների կատարում և շուկայի հետազոտում, ռազմավարական խորհրդատվության տրամադրում՝ կիրառելով համապատասխան կրթական և ուսուցման սխեմաներ, կազմակերպելով տեղեկատվության փոխանակումն և առաջարկելով մասնագիտացված ենթակառուցվածք:

ՄԱՐԻԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ
Ինեկոբանկի ավագ մասնագետ

ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ

Ժամանակակից պայմաններում երկրի տնտեսության զարգացման ռազմավարությունը հանդիսանում է հետևողական անցումը կայուն զարգացման, որը նշանակում է արտադրության անկման դադարեցում, ճգնաժամային երևույթների հաղթահարում և տնտեսական աճի առկայություն: 1991թ. Խորհրդային Միության փլուզումից հետո, Հայաստանում կենտրոնական պլանային տնտեսությունից անցում կատարվեց դեպի շուկայական տիպի հարաբերություններ: Տնտեսության վերափոխման գործընթացները սկսվեցին տնտեսության բոլոր ոլորտներում առկա ճգնաժամի պայմաններում (նախկին շուկաների և հումքի աղբյուրների կորուստ, արտադրական հզորությունների ֆիզիկական և բարոյական մաշվածք): Բարեփոխումների հետ կապված դժվարություններին գումարվեց նաև Ղարաբաղյան հիմնախնդիրը, պատերազմը և շրջափակումը, որոնք հանգեցրին երկրում քաղաքական անկայունության, էներգետիկ ճգնաժամի, միջազգային առևտրային և տեղեկատվական համակարգերից մեկուսացման: Այս պայմաններում խիստ կարևորվեց ներդրումների դերը հանրապետության տնտեսությունում:

Ներդրում եզրի լայնորեն կիրառվող հոմանիշը ինվեստիցիա բառն է, որը ծագել է լատիներեն invest բառից և նշանակում է ներդնել: Ներդրում ասելով հասկանում ենք կապիտալի այնպիսի օգտագործում, որի արդյունքում ներդրողը շահույթ է ստանում կապիտալի ողջ ծավալի ավելացման ճանապարհով: Ներդնել նշանակում է այսօր բաժանվել փողից՝ ապագայում ավելի մեծ գումար ստանալու նպատակով[1]:

Հետանկախացման ճգնաժամը հաղթահարելու համար, ներդրումների ներքին աղբյուրները խիստ անբավարար գտնվեցին հիպերինֆլյացիայի, չվճարումների, բանկերին քաղաքացիների չվստահելու, պետական բյուջեի աղքատ լինելու պատճառով: Ուստի ստեղծված իրավիճակից ելնելով, խիստ կարևորություն ստացավ ներդրումային համագործակցության հիմքի վրա արտասահմանյան ներդրումների ներգրավումը, որը կարող էր իրական արդյունք ապահովել ՀՀ ներդրումային շուկայական դաշտում: Արտասահմանյան ներդրումների ներգրավման անհրաժեշտությամբ պայմանավորված ՀՀ կառավարությունը մշակեց ՀՀ ներդրումային քաղաքականությունը: Ներդրումային քաղաքականություն ասելով հասկանում ենք միջոցառումների ամբողջություն, որն իրականացվում է իշխանական մարմինների կողմից ներդրումային ռեսուրսներ ներգրավելու և ռացիոնալ օգտագործելու համար՝ նպատակ հետապնդելով կայուն, հավասարակշռված և սոցիալական ուղղվածության զարգացման ապահովումը: ՀՀ ներդրումային քաղաքականությունը ՀՀ տնտեսական

[1] Ու.Ֆ.Շարպ, Գ.Ջ.Ալեքսանդր, Ջ.Բ.Բեյլի Ինվեստիցիաներ 1997թ. էջ. 1:

քաղաքականության բաղկացուցիչ մասն է կազմում և դիտարկվում է որպես տնտեսական զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը: Ներդրումների ներգրավումը և դրանց աճի ապահովումը լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ know-how-ների ներգրավումը (ընդհանուր և ֆինանսական կառավարում, շուկայավարում, նոր տեխնոլոգիաներ, հմտություններ և այլն), նոր շուկաների բացահայտումը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

ՀՀ կառավարությունը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «բաց դռների քաղաքականություն», որը ձևավորվել և գործում է ազատական սկզբունքների հիման վրա՝ նպատակ հետապնդելով նպաստել համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրմանը: Այդ ազատական սկզբունքները և մոտեցումները ամրագրվել են 1994թ. հուլիսի 4-ին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, 2005թ. Ապրիլի 21-ին հաստատված «ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգում» և այլ ներդրումներին վերաբերող իրավական ակտերի դրույթներում: Սկսած 1995թ-ից «Ուղղ սթրիթ ջորնըլ»-ը և Հերիթիջ հիմնադրամը ամենամյա քննություն են իրականացնում բացահայտելու համար այն գործոնները, որոնք առավել ուղղակի ազդեցություն են ունենում տնտեսական ազատության և բարգավաճման գործում (Տնտեսական ազատության ցուցանիշ): Ընդհանուր տնտեսական ազատությունը պարզելու համար վերլուծության են ենթարկվել հետևյալ գործոնները. առևտուր, հարկային բեռ, տնտեսությանը պետության միջամտությունը, դրամային քաղաքականություն, ստվերային շուկա, բանկային գործունեություն և ֆինանսներ, օտարերկրյա ներդրումներ, կարգավորում և այլն: Ուսումնասիրության մեջ Հայաստանը դիտարկված է որպես «մեծամասամբ ազատ»: Դիտարկման համաձայն, տնտեսության մեջ կառավարության միջամտությունը կարող է բնութագրվել որպես կայուն (չափավոր մակարդակ): Առևտրային քաղաքականությունը գնահատված է կայուն (շատ թույլ պաշտպանություն). ներմուծվող ապրանքները հիմնականում ազատ են քանակական, լիցենզավորման կամ այլ պահանջներից: Կապիտալի/ դրամամիջոցների հոսքը և օտարերկրյա ներդրումները նկարագրված են որպես կայուն (փոքր արգելքներ): Հայաստանը տրամադրում է պետական հավասար վերաբերմունք օտարերկրյա ներդրողների նկատմամբ, ովքեր ունեն բիզնես հիմնելու միևնույն իրավունքները, ինչ որ ՀՀ քաղաքացիները: Ըստ ԱՄՀ-ի (Արժույթի միջազգային հիմնադրամ) Հայաստանը չունի ոչ մի սահմանափակումներ կամ վերահսկումներ արտարժութային հաշիվների, բանկային գործարքների, ընթացիկ փոխանցումների, շահույթի հայրենադարձման, մշտաբնակ կամ ոչ մշտաբնակ անձանց կողմից կատարվող արտաքին և ներքին ներդրումների նկատմամբ: Սկսած 2002թ. Հայաստանը այս ցուցանիշի առումով հաստատուն կերպով բարելավում է իր դիրքերը: Այսպես. 2002թ. Հայաստանը 45-րդ տեղում էր, 2003թ. և 2004թ.՝ 44-ում, 2005թ.՝ 42-ում, 2006թ.-ին զբաղեցրել է 27-րդ տեղը 161 երկրների շարքում[1]:

ՀՀ ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է՝ տնտեսական ակտիվության բարձրացումը, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը և ներդրումների ծավալի մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի ու բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովումը: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորում,
- ներդրումային ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի կայացում:

Հզոր ներդրումներ ներգրավելու նպատակով, իշխանությունները պետք է ստեղծեն բարենպաստ ներդրումային միջավայր: Ներդրումային միջավայր ասելով հասկանում ենք այն միջավայրը, որում տեղի են ունենում ներդրումային գործընթացները: Այն ձևավորվում է տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ գործոնների ազդեցությամբ: Ներդրումային միջավայրի գնահատականը հիմնվում է երկու խումբ գործոնների գնահատականի վրա.

- ներդրումային ներուժի գնահատական,
- ներդրումային ռիսկերի գնահատական:

Ներդրումային ներուժն իրենից ներկայացնում է ներդրումային ռեսուրսների՝ նյութական (1 բնակչի հաշվով հիմնական ֆոնդերի բաժինը, հիմնական ֆոնդերի մաշվածության աստիճանը), ֆինանսական (1 բնակչի հաշվով եկամտի չափը), մտավոր (աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում և այլն) համախմբություն:

Ներդրումային ներուժի բաղադրիչներն են՝ ռեսուրսահումքային, արտադրական, աշխատանքային, ֆինանսական, սպառողական, ենթակառուցվածքային, ինստիտուցիոնալ, ինովացիոն:

Ներդրումային գործունեությունում հսկայական նշանակություն ունի անորոշության և ռիսկի գործոնի հնարավորինս գնահատումը և կանխատեսումը: Ռիսկը չափվում է որպես որոշակի չափով կորուստ կրելու հավանականություն: Ներդրումային որոշումները կայացվում են ներքին (պայմանավորված տվյալ ներդրումային նախագծին հատուկ առանձնահատկություններով) և արտաքին (ինֆլյացիայի սպասվելիք մակարդակը, շուկայական պահանջարկի փոփոխությունները, ներդրումային արժեքների գները, փոխառու կապիտալի տոկոսի փոփոխությունները, հարկային դրույքները և այլն) ռիսկի գործոնները հաշվի առնելով:

Ներդրումային ռիսկի բաղադրիչներն են՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, էկոլոգիական, քրեական, օրենսդրական, ֆինանսական, շուկայական, մրցակցային, արտարժութային: Հնարավոր ներդրումային ռիսկերի բացահայտման և դրանց ազդեցության մեղմացման նպատակով, ներկայումս ներդրումային քաղաքականությունն մշակելիս անպայման պետք է կատարվի ռիսկայնության գնահատում և առաջարկվի ռիսկի իջեցման ուղիներ: Ներդրողների համար առաջնային նշանակություն ունի քաղաքական ռիսկը:

[1] http:// cf.heitage.org/index/indexoffreedom.com.

Վերջինիս բնորոշումները տարբեր են: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել քաղաքական ռիսկի երեք կարևորագույն տարր՝ քաղաքական անկայունություն, հյուրընկալ կառավարության ոչ նպաստավոր քաղաքականություն և միջպետական հակասություններ: Այս տարրերը իրենց մեջ ներառում են բռնագրավումը, փոխհատուցմամբ սեփականազրկումը, գործադուլները, հակակառավարական ցույցերը, միտինգները, հեղաշրջումները, հեղափոխությունները, քաղաքացիական պատերազմները, որոնք կարող են ունեցվածքին, անձնակազմին, ապագա շահույթներին վնաս պատճառել, ստացված շահույթների հայրենադարձման հնարավոր սահմանափակումները, համաձայնագրերի և պարտավորվածությունների խախտումը կամ միակողմանի վերափոխումը, տեղական ֆիրմաների նկատմամբ խտրականության դրսևորումները հարկերի կամ պետական գնումների համակարգի միջոցով, միջպետական հարաբերությունների վատացումը, սահմանամերձ բախումները, միջազգային բոյկոտը և էմբարգոն[1]: ՕՈՒՆ-ի աճը մեծապես պայմանավորված է տարածաշրջանում և երկրի ներսում քաղաքական կայունության ապահովման հետ: Քաղաքական ռիսկի մաս կազմող քաղաքական անկայունությունը անմիջական բացասական ազդեցություն չի ունենում ինչպես նոր ներդրումների, այնպես էլ վերաներդրումների վրա: Արտասահմանյան մասնագետների հետազոտությունները ցույց են տվել, որ քաղաքական անկայունություն առաջացնող գործոնները՝ հեղաշրջումները, հակակառավարական ցույցերը և միտինգները, քաղաքական գործիչների սպանությունները և այլն, ինքնին դեռևս բացասական ազդեցություն չեն ունենում ներդրումների վրա, եթե չեն վնասվում ներդրողների ունեցվածքը կամ աշխատակիցների կյանքի համար վտանգավոր պայմաններ չեն ստեղծվում: Վտանգավոր պայմաններ կարող են ստեղծվել միայն այն դեպքում, երբ կառավարությունը ներքաղաքական լարված իրավիճակի հետևանքով, զոհաբերելով ներդրողների շահերը, փոփոխի իր քաղաքականությունը նրանց նկատմամբ՝ նպատակ ունենալով շահել հասարակության համակրանքը և մի որոշ ժամանակ շեղել նրանց ուշադրությունը անբավարարություն առաջացնող այլ երևույթներից: Հայաստանի կառավարության համար ակնհայտ է, որ բնակչության զբաղվածության խնդրի լուծման հիմնական ուղին զգալի ծավալներով ՕՈՒՆ-ի ներգրավումն է, հետևաբար երկրի կառավարությունը ներդրողների նկատմամբ վարվող քաղաքականության առումով պետք է անի ամեն ինչ պաշտպանելու համար նրանց շահերը:

Հիմնվելով վերը նշված գործոնների գնահատականի վրա՝ ներդրումային միջավայրի գնահատականը կարող է տատանվել լայն դիապազոնով՝ բարենպաստից մինչև անբարենպաստ: Բարենպաստ է համարվում այն միջավայրը, որը նպաստում է ակտիվ ներդրումային գործունեությանը, խթանում կապիտալի ներհոսքը: Անբարենպաստ միջավայրը բարձրացնում է ներդրումների ռիսկը, որը տանում է կապիտալի արտահոսքի և ներդրումային գործունեության խաթարմանը:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման անհրաժեշտությամբ պայմանավորված, տարեցտարի սրվում է նաև ներդրումներ ներգրավելու համար մրցակցությունը երկրների միջև, ուստի կառավարությունը պետք է ջանա հնարավորինս բարենպաստ դարձնել ՀՀ ներդրումային միջավայրը ներդրողների համար: Այս առումով, Հայաստանն ունի մրցակցային և՝ թերություններ, և՝ առավելություններ:

Ակնհայտ մրցակցային թերություններից է օտարերկրյա ներդրողների համար այնպիսի կարևորագույն շահադրդման գործոնների բացակայությունը, ինչպիսիք են շուկայի մեծ չափերը, բնական ռեսուրսների հարուստ պաշարների առկայությունը, կարևորագույն խոշոր շուկաներ ազատ ելք ունենալը, ծով դուրս գալու անհնարինությունը: Ցավոք, այս գործոնները հենց այն կարևոր գործոններից են, որոնք հիմնականում կանխորոշում են ներդրողների որոշումներն այս կամ այն երկրում ներդրումներ կատարելիս:

Հայաստանի մրցակցային առավելություններից հիմնականը տնտեսապես բավականին հզոր սփյուռքի առկայությունն է (տարբեր գնահատականներով՝ 5-ից 7 միլիոն մարդ), որոնց մոտ կեսն ապրում են Ռուսաստանում և ԱՄՆ-ում: Համաշխարհային տնտեսության մեջ մասնավոր ներդրումների հոսքերի ուսումնասիրությունը վկայում է, որ այլ երկրների համեմատ սփյուռք ունեցողները ՕՆ-ի ներգրավման հարցում ծավալած մրցակցության մեջ ձեռք են բերում որոշակի մրցակցային առավելություն: Հայաստանում հատկապես անկախության ձեռքբերումից հետո, սկզբնական շրջանում ներդրումները հիմնականում կատարվել են սփյուռքահայերի կողմից կամ նրանց անմիջական միջնորդությամբ և խրախուսմամբ: Համաձայն փորձագետների գնահատականների, ՀՀ-ում ՕՆ-ի ընդհանուր ծավալի մեջ սփյուռքահայերի կողմից կատարված ներդրումները կազմում են շուրջ 50%: Սակայն, չնայած հզոր սփյուռքի առկայությանը, այն գործոնները, որոնք բացասաբար են անդրադառնում օտարերկրյա ցանկացած այլ ներդրողի որոշման վրա, նմանատիպ ազդեցություն են թողնում նաև գործարար սփյուռքահայերի վրա: Այսինքն, չնայած ներդրումներ կատարելու սփյուռքահայերի պատրաստակամությանը և ցանկությանը, նրանք պատրաստ են դա անել միայն իրենց բիզնեսի զարգացման համար համապատասխան պայմանների առկայության դեպքում:

Մյուս մրցակցային կարևոր առավելությունը տնտեսությունը կարգավորող օրենսդրության ներդրումակենտրոն լինելն է: 2004թ-ին մշակվել և պաշտոնական շրջանառության մեջ է դրվել «Ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որի ընդունումը նպատակ ունի նպաստել տեղական և օտարերկրյա ներդրողների գործունեության համար հավասար, կայուն և կանխատեսելի ներդրումային օրենսդրության և գործարար միջավայրի ձևավորմանը: Օրենքը երաշխավորում է հավասար վերաբերմունք տեղական և օտարերկրյա ներդրումների նկատմամբ, զգալիորեն սահմանափակում է պետության կողմից ունեցվածքի բռնագրավման հնարավորությունը, պահանջում է լրիվ փոխհատուցում պետության կողմից ազգայնացման կամ բռնագրավման դեպքում, տալիս է ՕՆ կատարելու հնարավորություններ տնտեսության տարբեր ոլորտներում և տարբեր ձևերով, 5 տարի ժամկետով պաշտպանում անբարենպաստ փոփոխությունների

[1] Ա.Վ.Դարբինյան «Հայաստանը համաշխարհային տնտեսական ինտեգրացման գործընթացում» Երևան, Պետական ծառ. 2000 էջ. 230-233:

դեպքում, տրամադրում Հայաստանյան և միջազգային դատարան դիմելու հնարավորություն՝ տնտեսական վեճերը լուծելու նպատակով, տալիս է շահույթի և սեփականության լրիվ հայրենադարձման հնարավորություն, պաշտպանում է մտավոր սեփականությունը, տալիս է ազատ դրամական փոխանցումներ կատարելու հնարավորություն, որոնք սահմանված են միջազգային իրավական սկզբունքներին և նորմերին համապատասխան, ապահովում է մի շարք այլ իրավունքներ և արտոնություններ, որոնք օտարերկրյա ներդրողների կողմից դիտվում են որպես բավականաչափ կարևոր[1]:

Ներդրումային ոլորտը կարգավորվում է նաև «Ներդրումային քաղաքականության հայեցակարգ»-ով, որի հիմնական նպատակն է բարձրացնել ՀՀ ներդրումային քաղաքականության թափանցիկությունը, ամրագրել վերջինիս հիմնական սկզբունքները և ուղղությունները: Ի լրումն օրենսդրությանը, ՀՀ կառավարությունը ստորագրել է «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության» մասին երկկողմ համաձայնագրեր 37 երկրների հետ, այդ թվում ԱՄՆ, Ավստրիա, Կանադա, Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, Նիդեռլանդներ, Շվեդիա, Իտալիա, Հունաստան, Ֆինլանդիա և այլն: ՀՀ կառավարությունը ազատ առևտրի համաձայնագրեր է ստորագրել Վրաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Մոլդովայի, ՌԴ, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ: Հայաստանի և այս երկրների միջև իրականացվող առևտուրը ազատված է մաքսատուրքերի վճարումից: Հայաստանը հանդիսանում է «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին» կոնվենցիան ստորագրած երկիր և հանդիսանում է ՆՎԿՄԿ (Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի) անդամ: Հայաստանը համարվում է նաև ԱՀԿ (Առևտրի համաշխարհային կազմակերպության) անդամ երկիր[2]: Հայաստանը ԱՀԿ-ին անդամակցել է 2003թ. փետրվարին: Հայաստանի անդամակցությունն ԱՀԿ-ին երկրի տնտեսությունն առավել գրավիչ է դարձնում օտարերկրյա ներդրողների համար, նպաստում է ոչ միայն նոր ներդրումների ներգրավման գործընթացին, այլև համատեղ ձեռնարկությունների օտարերկրյա գործընկերներին հնարավորություն է տալիս ավելացնելու իրենց սեփական բաժնետոմսերն առկա մասնաճյուղերում:

Այսպիսով, ՀՀ-ում իրականացված ներդրումային քաղաքականության արդյունքում կարելի է փաստել, որ ներդրումների ներհոսքն աճել է: 2000-2006թթ. ընթացքում Հայաստանում ՕՆ-ի ընդհանուր գումարային ծավալը կազմել է ավելի քան 1.9 մլրդ դոլար (1991-1999թթ.՝ 520.3 մլն. ԱՄՆ դոլար, 2000-2003թթ.՝ 759.8 մլն. ԱՄՆ դոլար, 2004-2006թթ.՝ 1150.2 մլն. ԱՄՆ դոլար): 1991թ. սկսած աճել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ընկերությունների թիվը: Ըստ ԱՎԾ տվյալների 2007թ. հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանում հիմնադրվել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 3347 ընկերություն, որոնց մեծ մասը գրանցվել է վերջին տարիների ընթացքում: 1998-2006թթ. ընկած ժամանակահատվածում ներդրումների ծավալում դիտարկվել են կառուցվածքային էական փոփոխություններ: Այս ժամանակահատվածում, երբ մասնավորեցման գործընթացները հիմնականում ավարտվել են, օտարերկրյա ներդրումները մասնավորեցման գործընթացի մեջ փոքր տեղ են զբաղեցնում, օտարերկրյա ներդրումների ծավալը ներառում է մի շարք նոր հաստատված փոքր և միջին ձեռնարկությունների կապիտալը, ինչպես նաև վերաներդրումները: 2006թ. տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը (առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացածի) կազմել է 444.1 մլն. ԱՄՆ դոլար (2005-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճը կազմել է 10.9%), որից ուղղակի ներդրումները 250.7 մլն. ԱՄՆ դոլար: (աճը 2.6%՝ 2005-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ): Առանց սեփականաշնորհման միջոցների 2006-ին տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալը 2005-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 24.8% -ով, իսկ ուղղակի ներդրումների ծավալը՝ 25.4%ով: Օտարերկրյա ներդրումների աղբյուր հանդիսացող երկրներն են հիմնականում Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Հունաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Կանադան, Լիբանանը, Արգենտինան, Մեծ Բրիտանիան, Կիպրոսը:

2006թ. իրական հատվածում խոշորածավալ ներդրումներ են կատարվել հետևյալ ոլորտներում.

- Կապի ոլորտ՝ 135.0 մլն ԱՄՆ դոլար
- Հանքագործական արդյունաբերություն՝ 66 մլն ԱՄՆ դոլար
- Մետաղագործական արդյունաբերություն՝ 45.2 մլն. ԱՄՆ դոլար
- Սննդամթերքի և խմիչքների արտադրություն՝ 16.9 մլն ԱՄՆ դոլար
- Շինարարություն՝ 17.1 մլն ԱՄՆ դոլար
- Օդային տրանսպորտի գործունեություն՝ 55.6 մլն ԱՄՆ դոլար
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և էլեկտրոնիկա՝ 13.8 մլն ԱՄՆ դոլար
- Հյուրանոցային ծառայություններ՝ 9.9 մլն ԱՄՆ դոլար

2000-2006թթ. Հայաստանում իրականացված ՕՆ-ի ծավալը կազմել է 1.909 մլն ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 1.212 մլն ԱՄՆ դոլար: 1991-2006թ. Հայաստանում կատարված օտարերկրյա ընդհանուր ներդրումները կազմել են 2.439 մլն ԱՄՆ դոլար, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումներինը՝ 1.710 մլն ԱՄՆ դոլար[3]:

Այսպիսով, ինչպես փաստում է վիճակագրությունը, 2007թ-ին 2006թ-ի համեմատությամբ ներդրումների ծավալներն աճել են, ինչը վկայում է ներդրողների վստահության բարձրացման մասին, որն իհարկե ՀՀ կառավարության վարած ներդրումային քաղաքականության արդյունք է: Վիճակագրական տվյալների

---

[1] ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների» մասին:
[2] ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգ:
[3] www.minted.am, www.armstat.am.

համաձայն 2006թ. տնտեսության իրական հատվածում ներդրումների համար ամենագրավիչը կապի ոլորտն է եղել, որը թերևս պայմանավորված է 2005թ-ից այս ոլորտ նոր օպերատորի մուտքով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ոլորտը դեռևս չի ապահովում ակնկալվելիք ներդրումների ծավալը, քանի որ Հայաստանը՝ թերևս համարվելով բարձր տեխնոլոգիաների և այդ բնագավառում առկա բարձրորակ կադրերի երկիր, իրավամբ դեռևս զիջում է իր մրցակիցներին:

Սննդամթերքի և խմիչքների արտադրությունում օտարերկրյա ներդրումների ծավալը նույնպես փոքր է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս բնագավառում գերակշռում են ներքին ներդրումները:

Չնայած մեր երկրում իրականացվող շինարարական մեծածավալ աշխատանքներին, ներդրումների ծավալները գոհացուցիչ չեն նաև շինարարության բնագավառում, ինչը հետևանք է այն բանի, որ այս ոլորտում բավականաչափ աշխատանքներ կան կատարելու հատկապես շինարարության համակարգման առումով (հողօգտագործման, զոնավորման խնդիրներ):

Ներդրումների ծավալները գոհացուցիչ չեն նաև հյուրանոցային արդյունաբերությունում, այս բնագավառում նույնպես անելիքները շատ են ոլորտի կարգավորման առումով:

Այսպիսով, ընդհանրացնելով ողջ վերոնշյալը, կարելի է արձանագրել, որ ՀՀ կառավարությունն անշուշտ կարևորում է մասնավոր ներդրումների դերը տնտեսական հետագա զարգացմանը խթանելու գործում, հետևաբար ներդրումների աճի տեմպերի առկա միտումները պահպանելու և ավելացնելու նպատակով, ջանք չի խնայում ներդրողների համար առավել բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու և ամրապնդելու համար: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել կայուն և կանխատեսելի պայմաններ ձեռնարկատիրական գործունեության համար, նվազեցնել տեղական և օտարերկրյա ներդրումների ռիսկերը՝ վերացնելով կամ, գոնե հնարավորինս կրճատելով առկա վարչական խոչընդոտները, արդյունավետորեն ավարտել մասնավորեցման գործընթացը, իշխանական լծակները ուղղորդել հատկապես այն ներդրումային նախագծերի խրախուսմանը և աջակցմանը, որոնք ունեն արտահանման ուղղվածություն, առընչվում են բարձր տեխնոլոգիաների ոլորտին, վերամշակող արդյունաբերությանը և հատկապես այն ոլորտներին, որոնց հետագա զարգացումը հեռանկարային և շահավետ կլինի Հայաստանի տնտեսության համար:

ՄԱՐԻԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ
Ինեկոբանկի ավագ մասնագետ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել վարչական խոչընդոտների հայտնաբերման և դրանց վերացման ուղղությամբ: Այս նպատակով ՀՀ կառավարության միջնորդությամբ, ՀԲ-ի (Համաշխարհային Բանկ) և ՄՖԿ-ի (Միջազգային ֆինանսական կորպորացիայի) համատեղ կառույց հանդիսացող ՕՆԽԾ-ը (Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայություն) 2003թ. աշնանը նախաձեռնեց և 2004թ. վերջին ավարտին հասցրեց «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» հետազոտության իրականացումը: Հաշվետվությունը ներդրումները կարգավորող միջավայրի մակրո մակարդակի տեսակետ է ներկայացնում, դրանում մանրամասնորեն քննարկելով և վերլուծելով այն տարբեր ընթացակարգերը, որոնցով անցնում են ներդրողները ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և ծավալելու համար: Հետազոտության շրջանակներում համեմատություն է իրականացվել 2000թ. իրականացված համանման ուսումնասիրության արդյունքների հետ, համաձայն որի տնտեսվարման վրա ազդող մի շարք ընթացակարգերում նշանակալից բարեփոխումներ են տեղի ունեցել, ներառյալ ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը:

Սակայն առկա է դեռևս վարչական ընթացակարգերի մի ստվար զանգված, որոնք բարդ և դժվար հաղթահարելի են մնում հատկապես փոքր և նոր հիմնադրվող ընկերությունների համար: Դրանք են՝ օտարերկրյա ներդրողներին կացության կարգավիճակի տրամադրման խնդիրները, նոր ընկերությունների գրանցումը, հարկային վարչարարությունն ու ստուգումները, մաքսային ընթացակարգերը, դատական համակարգի անկախացումը, պետական հողի մասնավորեցումը և վարձակալումը, շինարարության համակարգումը:

Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա ներդրողների մուտք գործելու և կացության կարգավիճակի տրամադրման խնդիրներով զբաղվում է ՀՀ ոստիկանության անձնագրային ու վիզաների վարչությունը: ՀՀ մուտք գործելու համար անհրաժեշտ է ունենալ մուտքի արտոնագիր: Մուտքի արտոնագրերի տեսակներն են.

- մեկանգամյա մուտքի արտոնագիր մինչև 21 օր ժամկետով
- տարանցիկ մուտքի արտոնագիր մինչև 3 օր ժամկետով
- երկարաժամկետ մուտքի արտոնագիր 21 օրից ավելի ժամկետով:

ՀՀ-ում աշխատանքի անցնելու համար օտարերկրյա քաղաքացիներից աշխատանքի թույլտվություն չի պահանջվում: Այնուամենայնիվ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով, ՀՀ-ում 90 օրից ավել մնալու համար պահանջվում է ունենալ կացության կարգավիճակ: ՀՀ դեռևս մուտք չգործած օտարերկրյա քաղաքացին կացության կարգավիճակ ստանալու համար կարող է դիմել արտերկրում ՀՀ դեսպանություններ և հյուպատոսություններ: Կացության կարգավիճակներն են.

- կացության ժամանակավոր կարգավիճակ՝ տրամադրվում է մինչև 1 տարի ժամկետով